ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 14

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորատի 17.03.2020թ. նիստի

Նիստին ներկա էին ռեկտորատի 15 (տասնհինգ) անդամից 12-ը (տասներկու):

Նիստին մասնակցում էին՝

ZOOM հավելվածով.

1. Ե. Սերոբյան՝ ռեկտորի ԺՊ
2. Ն. Ավետիսյան՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ
3. Գ. Նիկողոսյան՝ ՇՊՀ պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավարի ԺՊ
4. Ս. Շահպարոնյան՝ ռեկտորի խորհրդական
5. Կ. Պետրոսյան՝ ռեկտորատի քարտուղար, գիտական քարտուղար,
6. Վ. Խաչատրյան՝ արհեստակցական կազմակերպության նախագահ,
7. Թ. Խաչատրյան՝ գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և ՏՏ կենտրոնի տնօրեն,
8. Ռ. Քալաջյան՝ ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ-գլխավոր հաշվապահ,
9. Բ. Պողոսյան՝ բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան
10. Ռ. Մարդոյան՝ մանկավարժության ֆակուլտետի դեկան.
11. Ա. Մկրտչյան՝ ռազմական ամբիոնի պետ,
12. Ա. Հովհաննիսյան՝ անձնակազմի կառավարման և իրավական ապահովման բաժնի պետ

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՀ-ում նոր կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) ստեղծված իրավիճակի և հանրապետությունում հայտարարված մեկամսյա արտակարգ դրությամբ պայմանավորված՝ գիտական խորհրդին ուղղված՝ 2019-2020 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում գիտելիքների գնահատման կարգում փոփոխությունների առաջարկի մասին

Հաղ.՝ ռեկտորի ԺՊ Եր. Սերոբյան

ԼՍԵՑԻՆ՝

ՀՀ-ում նոր կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) ստեղծված իրավիճակի և հանրապետությունում հայտարարված մեկամսյա արտակարգ դրությամբ պայմանավորված՝ գիտական խորհրդին ուղղված՝ 2019-2020 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում գիտելիքների գնահատման կարգում փոփոխությունների առաջարկի մասին

Պարոն Սերոբյանը առաջարկեց, որ պայմանավորված հանրապետությունում հայտարարված մեկամսյա արտակարգ դրությամբ, գիտական խորհրդին քննարկմանը նեկայացնել 2019-2020 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում գիտելիքների գնահատման կարգում փոփոխություններ կատարելու հարցը, մասնավորապես, ընթացիկ ստուգումները փոխարինել մեկ ամփոփիչ ստուգումով, որի գործակիցը ընդունել հավասար ընթացիկ ստուգումների գործակիցների գումարին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Բ. Պողոսյանը, Ռ. Մարդոյանը, Ա. Մկրտչյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաշվի առնելով ՀՀ-ում նոր կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) ստեղծված իրավիճակը և հանրապետությունում հայտարարված մեկամսյա արտակարգ դրությունը՝ 2019-2020 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում գիտելիքների գնահատման կարգում ամրագրված ընթացիկ ստուգումները փոխարինել մեկ ամփոփիչ ստուգումով, որի գործակիցը ընդունել հավասար ընթացիկ ստուգումների գործակիցների գումարին:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

Կողմ՝12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Պարոն Սերոբյանը նշեց, որ արտակարգ դրության պայմաններում դասապրոցեսները պետք է շարունակել հեռահար կապի տարբեր միջոցներով, ինչպես նաև՝ ավարտական կուրսերի ուսանողները ավարտական աշխատանքներն իրենց ղեկավարների հետ շարունակելու են հեռավար կապով աշխատել, և հանձնարարեց դեկաններին ամբիոնի վարիչների միջոցով ապահովել դասախոսների և նրանց կողմից դասավանդվող կուրսերի ավագների կապը, որպեսզի իրականացվեն վերոգրյալ աշխատանքները։

Ռեկտորատի հեռավար կապով աշխատանքների շարունակականության ապահովման նպատակով պարոն Սերոբյանը գիտական քարտուղար Կ. Պետրոսյանին հանձնարարեց «Zoom» հավելվածի միջոցով ստեղծել խումբ՝ ռեկտորատի բոլոր անդամների ընդգրկվածությամբ։
Պարոն Սերոբյանն ավելացրեց նաև, որ, անհրաժեշտության դեպքում, համալսարանի նոթբուքերից կտրամադրվեն վարչական աշխատակիցներին՝ տանից աշխատելու համար։

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հանձնարարականներն ընդունել ի գիտություն։

Ռեկտորատի նախագահ՝ ռեկտորի ԺՊ	Ե. Սերոբյան
Ռեկտորատի քարտուղար, գիտական քարտուղար՝	Կ. Պետրոսյան
Պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավարի ԺՊ	Գ. Նիկողոսյան
ՈՒսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ	Ն. Ավետիսյան Ս. Շահպարոնյան
Ռեկտորի խորհրդական՝ Ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվ. բաժնի վարիչ-գլխավոր հաշվապահ՝	Ռ. Քալաջյան
Արհեստակցական կազմակերպության նախագահ՝	Վ. Խաչատրյան
Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն՝	Ա. Սարգսյան
Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն՝	Հ. Մելքոնյան
Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի տնօրեն՝	Թ. Խաչատրյան

Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկանի — Բ. Պողոսյան

Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան՝ — Թ. Մելիքյան

Մանկավարժության ֆակուլտետի դեկան՝ — Ռ. Մարդոյան

Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան՝ — Օ. Հովհաննիսյան

Ռազմական ամբիոնի պետ՝ — Ա. Մկրտչյան

Անձն.կառ.և իրավ.ապահովման բաժնի պետ՝ — Ա. Հովհաննիսյան